նասանց լուսահոգի Գրիգոր Աղայի Բ կոյս դատերքն՝ որք ընդ մեզ էին, խնամքը ցեռան ազատուեցան. այս դատերաց էիպարքն և ազգ կանանցն ևս բօթն տուեալ էր այն երկուս տղէն. վասն որոյ ոչ կարծէին զմեզ գալ կենդանի. այժմ լուան զաղատելն մեր. և մանաւանդ անճառահրաշ զքանչելեօքն Աստուծոյ և սրբալոյս մեռանի գտանելն՝ իրաւի մեծ ցնծութիւն և ուրախութիւն եղև ազգիս մերոյ, որք կան այժմ բնակեալք յերկիրս Հնդկաց. նաև մեծ պարծանք և պայծառութիւն սրբոյ հաւատոյս Հայաստանեայցս եկեղեցւոյ։ Արդարև մեծ արար Ցէր ողորմութիւնս առ ազգս մեր. զի այսմ գառն ժամանակիս Աստուծոյ անենաքաղցր գթութիւնքն և նոր փրկարար զքանչելիքն երևեցան յայսմանեալ 'ի մէջ Հայոց ազգիս մերոյ։ Բայց զոյս ևս յայտ առնեմ՝ վասն անպատմելի ցնծութեան և ուրախութեան սրտիս և հոգւոյս, զի աստուածադործ սուրբ մեռանն, այս էր մեծի սրբազանի տէրութենէ նախկին և անդրանիկ շնորհաշխութեանն օրհնեալ պտուղն, որ 'ի ժամ օրհնութեան կարգն կատարելոյ 'ի նոյն ժամու ներկայացեալ ակամնատես էի 'ի սուրբ Աթոռդ յանկալի, 'ի մէջ մեծի հանդիսի բազմութեանց. վասն որոյ բիւր գոհութիւն և փառք բարերարին Աստուծոյ, որ այնպիսի հրաշապատում զքանչելեօք սրբոյ մեռոնին՝ ազատեցաք 'ի ծովու և 'ի գազանաց։ Բայց մեռցեալ ընկերաց 'ի մէջ անուանալն Գ. թուրքն և Ե. Ֆռանկ չար դազանք տարան, և մէկ Ֆռանկ ևս մեռաւ անտառն. իսկ այլ մեռցեալքս ծե մարդկանցս՝ ինն անձինք ազատեցաք վերջապէս՝ թէ մեք թէ այլազգիքն։ Դարձեալ սուրբ մեռոնն՝ զոր տգաք, ընդ մեզ եղեալ թուրքերն և Ֆռանկք ևս տեսին և վկայ եղեն մինչև ցայսօր. այլ մեզ չէ փոյթ վասն նոցին վկայութեան։ Որ և վերջապէս զոյս ամենայն բանս և պատմութիւնս՝ առաջի ամենամեծին Աստուծոյ ճշմարտութեամբ գրեցի, և ծանուցի սրբազանի Ցեռանդ իմոյ. և բազում բանս զանց արարեալ 'ի բաց թողի՝ վասն երկարութեանն, զի մի ձանձրութիւն երևեցցի տէրութեանդ և այլոց ընթերցողաց և ունկնդրողաց. վասն զի տեղոյս բարեպաշտօնք սմանք անձինք՝ բազում անգամ խնդրեցին 'ի մէնք՝ զի զամենայն զանցսն մեր որպէս զպատմութիւն գրել, և տալ իւրեանց՝ իբր զնորալուր բանս. այլ մեք ոչ յանձն առաք վասն ձանձրութեան. այլ այժմ հարկն ստիպեաց, զոր պարտ էր զամենայն անցսն մեր և զոր պիտի գրով ծանուցանել դերապատ Ցեռանդ իմոյ։ Գրեցաւ Ռ.Մ.Ժ.Բ, ձեռամբ իմով, 'ի յերկիրս Հնդկաց, 'ի Բանկալայ քաղաքն՝ ի սէիտասպատ կոչեցեալ, և յամենանն յունուարի ԺԲ. յօրն, սուրբ Պարգիսի պահոց չորեքշաբաթի, Սրբոյ Էջմիածնի անարժան նուիրակ Յովհաննէս վարդապետս։

ԱՌԱԿ

Իմաստասէր մի կայ՝ երթայր ուրախութեամբ զՀնդ զօրաց թագաւորին 'ի պատերազմ։ Ասին 'ի զօրացն ասէ ցնա. Ո՞վ դու ողորմելի, ուր երթաս, զի մահն փութով հասանէ քեզ, քանզի կաղ ես։ Եւ նա ասէ. Ո՞վ եղբայր, գործս որ երթամք՝ ոչ է ընթաց փախչելոյ, այլ գազաթելոյ և կռուելոյ։ — Յուցանէ՝ թէ բազում ակար իմաստունք՝ յանդիմանեն զՀզօր անմիտ։

Ոսկիփորիկ

digitised by A.R.A.R.@